



Հայաստանի առողջապահության նախարարության հաշվապահների պալատ

Քննական առարկա 2

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Քննաթերթ - պատասխաններ

Հարցեր 1-25	50 միավոր
Խնդիր 1	15 միավոր
Խնդիր 2	18 միավոր
Խնդիր 3	9 միավոր
Խնդիր 4	8 միավոր
Ըդամենը	100 միավոր

Հուլիս 2026թ.

Հարցեր 1-25. Բազմակի ընտրության հարցեր: Յուրաքանչյուր հարցի արժեքը 2 միավոր է:

1	Բ -ինքանժեքի հաշվառումը ֆինանսական հաշվառման մաս չէ
2	Գ -սենսորային/մեքենայական տվյալները ստացվում են սարքերի ելքային տվյալներից, որոնք արձանագրում են իրենց շրջապատի մուտքային տվյալներին
3	Բ
4	Ա - վաճառողներին տրվող կոմիսիոն վճարները հանդիսանում շուկայում առաջխաղացման ծախսեր են և հանդիսանում են իրացման ծախսեր: Էջ 49
5	Գ
6	Ա - $(2400*400+4000*900+10000*600+5000*4000)/$ $(2000*400+3000*900+10000*600+4000*4000)=1.198$
7	Գ
8	Գ - $500*5\%+200*10\%+100*60\%-200*25\%=55$
9	Դ - $(1200/2+700)*500=650,000$
10	Բ - $30+200/2=130$
11	Ա
12	Բ - $(15*800/60)/170=117.6\%$
13	Դ
14	Գ - լրիվ ծախսումներով ինքնարժեքի դեպքում միավորի ինքնարժեքը ավել կլինի 200 դրամով և քանի որ մնացորդը նվազել է վաճառքի ինքնարժեքը կմեծանա $(7700-4850)*200=570,000$ դրամով: Քանի որ ինքնարժեքը աճում է, շահույթը կնվազի, հետևաբար $2,750,100-570,000=2,180,100$
15	Գ -Շարունակելու դեպքում $8200-6500-1400=300$ լրացուցիչ շահույթ
16	Դ - բարեգործական հիմնադրամը շահույթ չհետապնդող է, հետևաբար ամենաքիչ կարևորություն ունեցող ցուցանիշը շահույթն է
17	Բ - $5400/90\%=6000$ կգ
18	Դ - Փետրվարի վաճառքից մուտք $1,800,000*45\%+$ մարտի վաճառքից $1,800,000*50\%=1,710,000$
19	Գ - $250*0,870+300*0,756+222*0,658-500=90$
20	Գ
21	Դ - $(8770-706)/10,080=0.8$; $(8770-706+256)/0.8=10,400$; $10400/5000=2.08\text{ժ}$
22	Բ - $(6300-5700)*800=480,000$ Բարենպաստ
23	Գ - ՄՇ=Ձուտ շահույթ-Ներդրում*Կապիտալի արժեք => $2400000=6400000$ -Ներդ. Կապ.*10%; => Ներդ. Կապիտալը= $(6400000-2400000)/0.1=40,000,000$; ՆՇ= $6400,000/40,000,000*100\%=16\%$
24	Ա - $300/1200*100\%=25\%$
25	Բ - $350/280=1.25$

Խնդիր 1.

(ա)	միավ.
(i) Տարևերջի դեբիտորական պարտքերի գումարը ԴՊ/Հասույթ*365= ԴՊ տևողություն	
$ԴՊ=15*24,300,000/360=$ 1,012,500	1
(ii) Տարևերջի կրեդիտորական պարտքերի գումարը Ընթացիկ իրացվելիության գործակից=Ընթ. Ակտիվ/Ընթ. Պարտավ Ընթացիկ ակտիվ=Պաշար+Դեր. պարտք+Դրամ.միջոց	
$Ընթացիկ ակտիվ=1,800,000+1,012,500+561,400=$ 3,373,900	1
$2/1=3,373,900/Ընթ. պարտավ;$ $Ընթ. պարտավ=3,373,900/2=$ 1,686,950	1
(iii) Արագ իրացվելիության գործակիցը, կրեդիտորական պարտքի մարումից հետո	
$Արագ իրացվելի ակտիվ=3,373,900-561,400-1,800,000=$ 1,012,500	1
$Ընթացիկ Պարտ.=1,686,950-561,400=$ 1,125,550	1
$Արագ իրացվելիության գործակից=1,012,500/1,125,550=$ 0.90	1
(բ)	
i)	
Տարեկան արտադրվում է $24,300,000/54,000=$ 450 Գամմա	0.25
Քանի որ Գամմաի միավորին օգտագործվում է 2 հատ K բաղադրիչ, K-ի տարեկան պահանջարկը $450*2=900$	0.25
Մեկ պատվերի պատվիրման ծախս $90,000+20,000=110,000$	0.25
K բաղադրիչի տարեկան պահպանման ծախս $12*1,500=18,000$	0.25
Պաշարների կառավարման ներկա ծախս	
Պատվերների քանակ 12(ամսական է), պատվիրվող քանակ $900/12=75$	0.25
Պատվիրման ծախս $12*110,000=$ 1,320,000	0.75
Պահպանման ծախս $75/2*18,000=$ 675,000	0.75
1,995,000	
Պաշարների կառավարման ծախս կիսամյակով պատվիրելու դեպքում	
Պատվերների քանակ 2(կիսամյակը մեկ), պատվիրվող քանակ $900/2=450$	0.25

Պատվիրման ծախս $2 \times 110,000 =$	220,000	0.75
Պահպանման ծախս $450/2 \times 18,000 =$	4,050,000	0.75
	<u>4,270,000</u>	

Բուժերի պահպանման ծախսը հաշվարկներում չի ներառվում, քանի որ երկու դեպքում էլ նույնն է և արդյունքի վրա չի ազդում

Մտադրությունը իրականացնելու դեպքում տարեկան ծախսերը կաճեն $(4,270,000) - 1,995,000 = 2,275,000$ -ի չափով, հետևաբար չարժե իրականացնել կիսամյակային պատվիրելու մտադրությունը 0.5

(գ)

(i) Քանի հատ K բաղադրիչ է օգտագործվել 20X7 թվականին
Օգտագործվող բաղադրիչների դուրս K և N

K բաղադրիչ գին $1,800,000/150 = 12,000$ 0.5

N բաղադրիչի գին K-ի 25% է, $= 12,000 \times 0.25 = 3,000$ 0.5
20X7-ին N բաղադրիչի գինը աճել է 10% և հավասար է $3,000 \times 1.1 = 3,300$

	20X6		20X7
քանակ	գին	քանակ	գին
900	12,000	X	12,000
450	3,000	X/2	3,300

X-ը K բաղադրիչի քանակն է, որը Գամմայի մեջ օգտագործվում 20X7-ի համար:

Լասպեյրեսի քանակային ինդեքսի հիմքում ընկած են համեմատական տարիների քանակները և սկզբնական գները և հավասար է $(X \times 12,000 + X/2 \times 3,000) / (900 \times 12,000 + 450 \times 3,000)$ և խնդրի տվյալների համաձայն 110% 2
-է: Հետևաբար $12,000X + 1,500X = (900 \times 12,000 + 450 \times 3,000) \times 1.1$
 $13,500X = 13,365,000$ $X = 990$; 20X7-ի K բաղադրիչի սպառումը 990 հատ է

(ii) Ծախսերը նվազագույնի հասցնելու պատվիրման խմբաքանակը հավասարաչափ սպառման պարագայում ՊՕՔ(պատվերի օպտիմալ քանակ)ն է $\text{ՊՕՔ} = \sqrt{2 \times 990 \times 110,000 / 18,000} = 110$ 1

Խնդիր 2.

(ա)	
(i) Տոկոսավճարի ծածկույթ (Interest cover ratio)	
Գործառնական շահույթ/Տոկոսներ = $57,600 / (72,000 * 8\%) = 10$	1.5
(ii) Գործարկված կապիտալի շահույթաբերություն (ROCE)	
Գործառնական շահույթ/Գործարկված կապիտալ * 100% = $57,600 / 192,000 * 100\% = 30.0\%$	1.5
(iii) Ֆինանսական լծակը, ըստ պարտք/սեփական կապիտալ բանաձևի	
Գործարկված կապիտալ = Սեփական կապիտալ + Երկարաժամկետ պարտավորություն; հետևաբար Սեփական կապիտալը = Գործարկված կապիտալ - Պարտք = $192,000 - 72,000 = 120,000$:	1.0
Լծակ (պարտք/սեփական կապիտալ) = $72,000 / 120,000 * 100\% = 60\%$	1.0
(բ)	
Այս գործողությամբ ծախսը ըստ էության չի վերանում սակայն տեղափոխվում է մյուս ժամանակաշրջան, ինչի արդյունքում տվյալ տարվա գործարկված կապիտալի շահույթաբերությունը կաճի ի հաշիվ նրա որ համարիչում գտնվող շահույթը կաճի, սակայն հաջորդ տարվա գործառնական շահույթը կնվազի: Արդյունքում ԳԿՇ արհեստականորեն կաճի	1.0
Պահեստում վառելիքի թերագնահատման արդյունքում կմեծանա վառելիքի գծով ծախսը, հետևաբար կնվազի հաշվետու տարվա գործառնական շահույթը : Արդյունքում ԳԿՇ չի կաճի	0.5
Դեռ չվաստակած եկամտի ներառումը ֆինանսական հաշվետվություններում արհեստականորեն կմեծացնի ԳԿՇ-ի համարիչում գտնվող շահույթը: Արդյունքում ԳԿՇ արհեստականորեն կաճի	1.0
Դեբիտորական պարտքերի հավաքագրելիության պահուստի գերագնահատումը կնվազեցնի դեբիտորական պարտքերը, հետևաբար կմեծանան ծախսերի, ինչի արդյունքում կնվազի շահույթը: Արդյունքում ԳԿՇ չի կաճի	0.5
(գ)	
Մեկ տոննա*կիլոմետրի ծախս: Մնացած երեք ցուցանիշը չեն արտացոլում արդյունքի և դրա հետ կապված ծախսը: Այս ցուցանիշը ցույց է տալիս թե մեկ կիլոմետր հեռավորության վրա մեկ տոննա բեռ տեղափոխելը (արդյունք) որքան ծախս կպահանջվի:	2.0
(դ)	
Առաջին գնորդի տարբերակ- դա սկզբնական պահին 2500 է գումարած երեք հավասար մասերով սկսած առաջին տարվա վերջից, որը անուիտետ է; հետևաբար առաջարկի ներկա արժեքը կազմում է $2500 + 2500 * \text{Անու-տի գործադիկից տարի } 15\% = 2500 * (1 + 2.283) = \mathbf{8,207}$ հազ դրամ	2.0
Երկրորդ գնորդի տարբերակ- $11000 / (1 + 15\%) = 11000 * 0.870 = \mathbf{9,565}$ հազ դրամ	2.0

Ավելի շահավետ է երկրորդ գնորդի առաջարկը՝ 11,000 հազ դրամ մեկ տարի հետո, սակայն քանի որ Ընկերության պլանավորված գինը բավական ողջամիտ է նպատակահարմար է շարունակել փնտրել գնորդ, որը կվճարի ներկայումս 10,000 հազ դրամ	2.0
(ե)	
$(1+3\%)^4 - 1 = 1.03^4 - 1 = 12.55\%$	2.0

Խնդիր 3.

(ա)				
(i) Նյութի գնի շեղումը				
Փայտ	204000-170*1000=		34,000	0.25
Ապակի	86000-70*1200=		2,000	0.25
	Անբարենպաստ		36,000	1.5
(ii) Նյութի օգտագործման շեղումը				
Փայտ	1000*(170-300*0.5)=		20,000	0.25
Ապակի	1200*(70-300*0.25)=		(6,000)	0.25
	Անբարենպաստ		14,000	1.5
(բ)				
Վաճառքի մենեջերը պատասխանատու չէ, քանի որ նա պատասխանատվություն է կրում է արտադրանքի հնարարավոր բարձր գնով և մեծ քանակությամբ վաճառքի համար				0.5
Գնումների մենեջերը պատասխանատու չէ, քանի որ նա պատասխանատվություն է կրում որակյալ հումքի(ապրանքների գնման) և ցածր գնով այն ձեռքբերելու համար: Գնման տեսականին և քանակը ձևավորվում են հիմնականում արտադրամասերից ստացված պահանջագրերի հիման վրա				0.5
Արտադրության մենեջերը պատասխանատու է արտադրության համար և գնումների պահանջագիրը կազմելիս պետք է հաշվի առնի այն փաստը որ արտադրությունում առկա է 15 կգ ապակու մնացորդ: Միևնույն ժամանակ նա պետք է բացատրի թե ինչն է պատճառը, որ չնայած փայտի մնացորդի անփոփոխ մնալուն աճել է ապակու մնացորդը: Արդյոք դա սխալ պատվերի, փայտի վատնման թե արտադրական պրոցեսի փոփոխության հետևանք է				1.0
(գ)				
(i) Միայն է- Ճկուն բյուջեով բոլոր արտադրական վերադիր ծախսումները վերահաշվարկվում են իրացման տարբեր մակարդակներին համապատասխան: Իրացման տարբեր մակարդակներում հաստատուն արտադրական վերադիր ծախսումները(օր՝ մաշվածությունը) մնում են նույնը, հետևաբար ոչ բոլոր արտադրական վերադիր ծախսումներն են վերահաշվարկվում ճկուն բյուջեում:				1.5

(i) Միավ է- Երկարաժամկետ հատվածում բոլոր հաստատուն ծախսումներից կարելի է խուսափել կամ դրանք կրճատել: Չնայած երկարաժամկետ հատվածում ծախսումների մեծ մասը կարելի է կրճատել կամ դրանցից խուսափել, այնուամենայնիվ անվերահսկելի ծախսումների նկատմամբ կառավարիչները վերահսկողություն չունեն, հետևաբար հնարավոր է չկարողանան կրճատեն կամ խուսափեն:	1.5
---	-----

Խնդիր 4.

	միավ
Նվազգույն քանակը որոշելու համար պետք է վաճառվի առավել շահութաբերությամբ՝ Մաթեմատիկա $-(4000-2000)/4000*100\%=50\%$ Ֆիզիկա $-(4000-2500)/4000*100\%=37,5\%$ Քիմիա $-(2000-1500)/2000*100\%=25\%$ Հետևաբար գրքերը պետք է վաճառվեն հետևյալ համամասնությամբ Ամենաշահութաբերը Մաթեմատիկա 50%-ը, Ամենաքիչ շահութաբերը՝ Քիմիա 20%, Ֆիզիկա 30%:	1,5
Նվազագույն խմբաքանակի սահմանային շահույթ $5*(4000-2000)+3*(4000-2500)+2(2000-1500)=15,500$	1
Անհրաժեշտ է վաճառել այնքան խմբաքանակ որ ծածկի 240000 ընդհանուր ծախսերը և առաջացնի 70000 շահույթ, ընդամենը $310,000: 310000/15500=20$:	1
Հետևաբար պետք է վաճառվի Մաթեմատիկա $-20*5=100$ հատ Ֆիզիկա $-20*3=60$ հատ Քիմիա $-20*2=40$ հատ Ընդամենը՝ $100+60+40=$ 200 հատ դասագիրք	1
Հասույթ $100*4000+60*4000+40*2000=$ 720,000 դրամ	1
Քանի որ բաշխումը տեղի է ունենում իրացման հարաբերական արժեքով, ֆիզիկա դասագրքի տպագրությանը բաշխվող ընդհանուր ծախսեր $60*4000/720,000*240,000=80,000$	1,5
Ֆիզիկա դասագրքից տպագրությունից և վաճառքից շահույթը կկազմի $60*(4000-2500)-80000=$ 10000 դրամ	1